# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀՈՑ-ԷԱՃԱՊՁԲ-25/35» ծածկագրով մրցույթով նախատեսված արբանյակային ընդունիչների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 16.10.2025թ. ժամը 16.00-ին

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| **Հանձնաժողովի նախագահ՝** | Ս. Դավթյանը |
| **Անդամներ՝** | Ս. Քոչարյանը<br>Ա. Հարությունյանը |
| **Հանձնաժողովի քարտուղար՝** | Մ. Նիկոյանը |

1. Հանձնաժողովը արձանագրեց.

Արբանյակային ընդունիչների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՈՑ-ԷԱՃԱՊՁԲ-25/35 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ ս. թ. հոկտեմբերի 10-ից մինչև 16-ը ընկած ժամանակահատվածը ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ տրամադրած պարզաբանումները.

Հարցում 1

Հարգելի գործընկերներ, խնդրում եմ տալ պարզաբանում , ինչ է նշանակում մատակարարման պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ, եթե կիրառելի է: Եթե կիրառելի է- արտահայտությունը, արդյոք այն նշանակում է որ դուք կընդունեք ապրանքը նաև առանց սերտիֆիկատի կամ նամակի, թե այն պարտադիր է և պետք է ներկայացվի?

Պարզաբանում 1

Հարգելի մասնակից, Համաձայն հրավերի տեխնիկական բնութագրի ընդհանուր պահանջների՝ մասնակիցը պետք է պայմանագրի կատարման փուլում ներկայացնի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ կամ համապատասխանության սերտիֆիկատ:

Հարցում 2

Հարգելի գործընկեր, Խնդրում ենք տալ պարզաբանում. Բնութագրի մեջ նշված է հետևյալ կետը՝ LNB բևեռացումը՝ 0Վ, 13Վ, 18Վ ընտրովի: Խնդրում ենք ճշտել՝ արդյո՞ք սա վրիպակ չէ, քանի որ բազմաթիվ արտադրողներ նշում են, որ տվյալ պարամետրը պետք է լինի առանց 0Վ արժեքի: Այսինքն՝ ճիշտ տարբերակը պետք է լինի՝ LNB բևեռացումը՝ 13Վ, 18Վ ընտրովի: Եթե այո, խնդրում ենք կատարել համապատասխան փոփոխությունները հրավերի մեջ:

Պարզաբանում 2

Հարգելի մասնակից, Տեխնիկական բնութագրում նշված 0Վ - ը, նշանակում է լարման բացակայում: Որոշ արտադրողների մոտ կարող է առկա լինել "0" արժեքը, որոշների մոտ՝ "OFF" արժեքը: Երկու դեպքում էլ այն նշանակում է լարման բացակայում: Տվյալ ընտրության հնարավորությունը պետք է առկա լինի արբան

2. <u>Հանձնաժողովը որոշեց</u> Հաստատել իրավերի պարզաբանման մասին հայտարարության տեքստերը հայերեն և ռուսերեն լեզուներով

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

Հանձնաժողովի նախագահ՝ ________ Ս. Դավթյան

անդամներ՝ ________ Ս. Քոչարյան

________ Ա. Հարությունյան

քարտուղար՝ ________ Մ. Նիկոլյան